



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՅԳԵԶԱՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի  
Այգեզարդ համայնք Հեռ.(0235) 6 10 77

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 դեկտեմբերի 2013թվականի N 20-Ն

ԱՅԳԵԶԱՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2013ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ և ՎՃԱՐՆԵՐԻ  
ԴՐՈՒՅՔԱԶՎՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 18, 19-րդ կետերի և «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 8-րդ և 10-րդ հոդվածների պահանջներով .

Ավագանին որոշեց՝

Այգեզարդ համայնքում 2014թվականին սահմանել տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույթաչափերը՝

1.ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան համայնքի տարածքում նոր շենքերի, շինությունների (ներառյալ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման)թույլատվության համար տեղական տուրքը սահմանվում է.

հիմնական օբյեկտների համար

ա)մինչև 300քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեզործական (ամառանոցային) տների, ինչպես նաև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար 5000 դրամ.

բ) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար

բա)201-ից մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 15000դրամ.

բբ)501-ից ինչև1000քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 25000դրամ:

բգ)1001-ից մինչև 3000քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 25000դրամ:

բդ) 3001-ից ավել ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 50000դրամ:

Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար

գ)մինչև 20քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 15000դրամ.

դ)20 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 2500դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի և շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման արդիականացման աշխատանքների (բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլատվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների շենքերի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա) հետևանքով օբյեկտների ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն 1500 դրամ:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրք սահմանել 1000 դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանել՝

ա) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար 2000 դրամ

բ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար 3000 դրամ

5. Համայնքի տարածքում

ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 350 դրամ մեկ քմ –ի համար:

բ) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրսծախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 150 000 դրամ:

գ) Խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 30000 դրամ:

6. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար 1 քմ տեղական տուրքը սահմանել.

ա) ալկոհոլային (սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար 1000 դրամ

բ) Թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) , արտադրաք գովազդող արտաքին գովազդի համար 2500 դրամ

գ) այլ արտաքին գովազդի համար 500 դրամ

դ) Դատարկ գովազդային վահանակների համար 700 դրամ

7. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմանները մշակելու և հաստատելու շինարարության ավարտը փաստագրելու համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար 1000 դրամ:

8. Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերն հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալությամբ տրամադրելու դեպքում՝ անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար Տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար 1000 դրամ:

9. Տեղական ինքնակառավարման մարմնի կողմից, մրցույթներ, աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար 2000 դրամ:

10. Այգեզարդ համայնքի տարածքում աղբահանության վճար սահմանել յուրաքանչյուր շնչին ամսեկան 10 դրամ:

11. Սույն որոշման 1-ին, 2-րդ և 3-րդ կետով սահմանված դրույքաչափերը համայնքում կիրառվել է 0.5 գործակիցով:

Կողմ (8)

Դեմ(0)

Ձեռնպահ(0)

Սարգիս Սարգսյան  
 Գարիկ Բադալյան  
 Էդուարդ Սարգսյան  
 Ազատ Ավետիսյան  
 Վրեժ Դավթյան  
 Ռազմիկ Պետրոսյան  
 Յուրիկ Սարգսյան  
 Գևորգ Մնացականյան

*(Handwritten signatures corresponding to the names above)*

Այգեգարդ համայնք



*(Handwritten signature)*

Ա.Մանուկյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՅԳԵԶԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի  
Այգեզարդ համայնք Հեռ.(0235) 6 10 77

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 դեկտեմբերի 2013թվականի N 21-Ն

ԱՅԳԵԶԱՐԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԾՆՈՂԱԿԱՆ ԳՈՒՄԱՐԻ և ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ ՀԱՃԱ  
ԵՐԵՆԱՆԵՐԻ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 19-րդ կետի պահանջներով

Ավագանին որոշեց`

Այգեզարդի մանկապարտեզի ծնողական գումարի չափ սահմանել ամսական 3000դրամ:  
Արվեստի դպրոց հաճախող երեխաների վարձավճարի չափ սահմանել 2500դրամ:

Կողմ (8)

Դեմ(0)

Չեռնպահ(0)

Սարգիս Մարգարյան  
Գարիկ Բաղալյան  
Էդուարդ Մարգարյան  
Ազատ Ավետիսյան  
Վրեժ Դավթյան  
Ռազմիկ Պետրոսյան  
Յուրիկ Սարգսյան  
Գևորգ Մնացականյան

Այգեզարդ համայնքի



Ա.Մանուկյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՅԳԵԶԱՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի  
Այգեզարդ համայնք Հեռ.(0235) 6 10 77

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 դեկտեմբերի 2013թվականի N 22-Ն

ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՍԱՀԱՑԱԾՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՍԱՐ  
ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետի պահանջներով.

Ավագանին որոշեց՝

Համայնքում մահացածների ընտանիքներին հուղարկավորման ծախսերի համար դրամական օգնության չափ սահմանել 40 000դրամ:

Կողմ (8)

Դեմ(0)

Չեղմպահ(0)

Սարգիս Մարգարյան  
Գարիկ Բաղալյան  
Էդուարդ Մարգարյան  
Ազատ Ավետիսյան  
Վրեժ Դավթյան  
Ռազմիկ Պետրոսյան  
Յուրիկ Սարգսյան  
Գևորգ Մնացականյան

Այգեզարդ համայնքի



Ա.Մանուկյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՅԳԵԶԱՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի

Այգեզարդ համայնք Հեռ.(0235) 6 10 77

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 դեկտեմբերի 2013 թվականի N 23 -Ն

ԱՅԳԵԶԱՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2013ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ  
ՓՈՓՈԽՆՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով.

Ավագանին որոշեց՝

- 1.Քանի որ համաձայն ՀՀ կառավարության 27.06.2013թվականի նո.661-ն որոշման Այգեզարդի գյուղապետարանին հատկացված 1820.0 հազ. (մեկ միլիոն ութ հարյուր քսան հազար ) դրամ սուբվենցիան՝ կապված նվազագույն աշխատավարձի բարձրացման հետ, պակասեցվել է 231,8 հազ. դրամով,ուստի բյուջեի եկամտային մասի ընթացիկ սուբվենցիաներ համայնքներին հաշվեհամարից պակասեցնել 231,8 հազ. դրամ:
2. Համայնքի բնակչության կողմից աղբահանության համար նախատեսված գումարը չվճարելու պատճառով բյուջեի եկամտային մասի տեղական վճարներ /աղբահանութան/ հաշվեհամարից պակասեցնել 280.0 հազ.դրամ:
- 3 .Բյուջեի եկամտային մասի տեղական տուրքեր հաշվեհամարից պակասեցնել 55.0 /հիսունհինգ հազար/ դրամ,Ա/Չ Այրոնա Դավթյանի խանութի աշխատանքների դադարեցման և շին. թույլտվության դիմումներ չլինելու պատճառով:
4. Միաժամանակ բյուջեի ծախսային մասի՝ վարչական բյուջեի պահուստային ֆոնդի 11.01.02.51 ծրագրի 4891 հոդվածից պակասեցնել 566.800 (հինգ հարյուր վաթսուներեց հազար ութ հարյուր) դրամ:

Կողմ (8)  
Սարգիս Սարգսյան  
Ազատ Ավետիսյան  
Ռազմիկ Պետրոսյան  
Յուրիկ Սարգսյան  
Գարիկ Բադալյան  
Վրեժ Դավթյանի  
Էդվարդ Սարգսյանի  
Գևորգ Մնացականյան

Դեմ(0)

Ձեռնպահ(0)

Այգեզարդ համայնքի



Ա.Մանուկյան